

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԼԵՆ

Ե. ԲՈՐՈՊՅԱՆ

Նամակ կամ սր և է

գրութիւն պետք է ուղղել առ

Տնօրին ԱՐՇԱԼՈՅՍ Գրագրի

ԳԱՇԻՐԷ (Կահիրէ)

Թի.


E. TOROSSIAN

Dirac. propr. du journal arménien

ARCHALOUICE

LE CAIRE (EGYPTE)

Boite Postale No.



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՌԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՐԱՐ	
Տարեկան ողջ դանկն.	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան	20
Վեցամսեայ	12

ՔԱՌԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԿԻԿ ԵՒ ԹՂԹԱՍԱՐԻ ԺԱԽՔՔ ԽՈՐԱԳՐՈՒՔԵԱՆՍ ՎՐԱՅ Է :

ԽՈՐԱԳՐՈՒՔԵԱՆՍ ՈՂՂՈՒՄՈՒ ԶՐԱՔԻՆԻՖ ԵՍ Զ'ԵՆ ՏՐՈՒՅՐ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ Կանխիկ վճարելի են

ՏԵՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մարդկային յառաջդիմութեան արժեքին իսկական ըմբռնումը՝ որ ժամանակէ մը ի վեր խել մը անճարակներու գաղափարներուն մէջ աշխարհաբար էր, այսօր մի քիչ ուրախ կ'ըլլանք տեսնելով որ, այդ արժեքին կից արդ տակաւ առ տակաւ մեր ազգին գրեթէ ամեն դասակարգի մարդերուն շինիչ ազդեցութեան մը ենթակայ եղած ըլլալու երևոյթն ունեցած է : Եթէ յետագարձ ակնարկներ նետենք յանցապարտ սոփոքանած ապագային վրայ, գիտելով անոր մէջ կուտակուած այն ազեղուիչ և միանգամայն մահաբեր չարիքները, որոնք իսկապէս քնասեցին մեր հայրենիքի փրկութեան գործին, և սե մուրով մրտաբեցին հայուն ճակատը, մեծ ցաւ պիտի զգանք, զզուանք տեսնելով որ՝ այդ արգահասիչ ուղղութեան ծնունդ տուող յետադիմութեան զօրավիգներէն մին ալ տեսականութեան պակասը եղած է :

Այդ ամենամեծ թերութիւնը որ խոչնդոտ մը կը հանդիսանայ մեր ազգին զարգացման ու յառաջդիմութեան, և որ կայ ու կը մնայ միշտ, զա՛ պարզապէս փուշ ու տատակ եղած՝ և խոցոտած ու արիւնոտած է մեր սրտերը : Այսօր՝ անոր դառն յիշատակն է, որ կուգայ մեր աչքերէն խելի կաթիլ կաթիլ արցունքներ, նետելով զմեզ յուսահատութեան ծովուն մէջ և կ'ստիպէ զմեզ որպէսզի թշուառութեան օձին փարկնք :

Բարեջրլուծի նոր ճամբու մը մէջ մըտնելու համար ամեն օր պէսպիսի նորութիւններ կը յլանանք և չ'ենք վարանիր երբէք մեր այդ յղացումը գրականապէս գործադրութեան ենթարկել. այնպէս որ նախապէս կը հետաքրքրուինք, կուզենք աշակցել և ստատրել. այն ամեն զոհորութիւններով, որոնցմով երեան կուգան ժողովրդի մը նիւթական ու բարոյական շահուց նպատող բազմազան ձեռնարկներ : Կամ հեռուէն օժանդակելով՝ և կամ ուղղակի մասնակցութեամբ գործօն դեր մը ստանձնելով ծանր հոգ մը մեր վրայ կ'առնունք ուղիղ մտքով և զօրեղ կամքով, ժամանակ մը կ'աշխատինք. բացառիկ կորու վամոտութիւն մը ցոյց կուտանք, կարծես թէ՛ մասնաւոր այդ գործին համար ծնած ըլլայինք. ալ այնուհետեւ փայլուն ապագայի մը նախաշաւիղը մեր առջև կը ներկայանայ. ահա յայտնի կը շինենք ու կը կազմակերպենք :

Գործը չափուած, դժուած կազմարի մը մէջ ձուլելով, միջոց մը կը շարունակենք մեր շանքերն. հազու թէ ակնկալուած արգիւնքը ձեռք բերելու և այդ աշխատութեան անդրանիկ հասուն պտուղը վայելելու առիթը կը ներկայանայ, յանկարծ շարաչուք տեսարանի մը հանդիսատես կը գտնուինք. որովհետեւ չի գիտցուիր ի՞նչ պատճառներով եռանդները թուլցած, փութաշանութեան ոգին պակասած, և պարտաճանաչութեան զգացումը մարած է :

Կը հարցնենք այժմ թէ՛ ո՛ւր մնացին մեր գէպի աշխատութիւն ունեցած այն արտակարգ նախանձախնդրութիւնները. ո՞ր մնացին նախապէս ցոյց տրուած անվստուհիանալի գործունէութիւնները, որոնք զմեզ յառաջդիմութեան նախկարապետ շրջանին պիտի հասցնէին. ընդհակառակն ալ հիմա յետադիմութեան շրջանին նախագիծը ունինք մեր առջև :

Մեր երգը աղուէսին լացերուն եւ բուերուն հուշուրմանը խառնուած է :

Կենդանի զգացումները ոչնչացած են. յարատեւութիւնը բացակայ է և կամ շատ սարրական. մշտական գանգատի բողբոջումներուն սկզբնաւորութիւնը կը նշմարուին վերջապէս . . . :

Վերջապէս տիրող ընդհանուր անշարժութեան կը յաղորդէ յայտնի անկումը. ահա որ պատուհասը. ալ այնուհետեւ անձնախարութեան երգերն են որ կը կազմեն մեր միւթարութիւնը. ի՞նչ գձուձ չարժառիթ պատճառ եզաւ այս կամ այն գործին քայքայման. ոչինչ. չ'ենք վարանիր երբէք հաւատալու թէ՛ յարատեւութեան բարձր ու վսեմ ոգին էր որ պակսեցաւ մեզմէ, ուրիշ ոչինչ :

Ա՛հ. . . երանի թէ՛ կանուխէն ո՛չ յղացած և ոչ ալ նախաշարձի եղած ըլլայինք գործի մը մէջ նետուելու. թերևս սուրբ և նուիրական ձեռնարկ մը քայքայելով, խղճի խայթը զմեզ չ'էր տանջէր. թերևս այդպիսի կարճատեւ գործունէութեամբ մը ժողովրդի բարեմտութիւնը շահագործած չ'էինք ըլլար. ինչպէս նաեւ անոնց գէպի հանրային գործերն ունեցած հաւատքն ու համոզումն ալ խախտելու առիթ չ'էինք տար :

Արդարեւ կ'արժէ լուսկան լայն տեսութիւններ ընել տեսականութեան վրայ սակայն նկատելով որ Արշալոյս ի անձուկ էջերը չ'են ներքեւ մեր փափաքին գոհացում տալու, ուստի յառաջիկային կը վերապահենք այս մասին մեր բնեւորները :

Առ այժմ՝ խօսքերնիս մասնաւորելով

հայ թերթերու տեսականութեան վրայ, անօգուտ չի լինիր ի հարկէ երբ ասոնց վրայ լուրջ ակնարկ մը նետելով՝ համառօտիւ մը պարզենք թէ՛ մենք առ հասարակ ի՞նչ պաշտօն կազմած ենք այս մասին :

1896 ի գաղթականութենէն ի վեր արտասահմանի մէջ շատ մը թերթեր լոյս տեսան. որոց մէջ գտնուեցան այնպիսիներ՝ որոնք հանրութեան շահերը պաշտպանելով գործնական օգուտներ բնձեցին. գտնուեցան այնպիսիներ որոնք դիտական կրթական, բանասիրական, իմաստասիրական ճիւղ պարունակութիւններով գուրեւ եկան և իրենց շուրջ այնքան համակրանք բողբոջեցաւ. գտնուեցան այնպիսիներ նաև, որոնք անգոյն՝ սեւէ իսեպէս վուրկ, անօգուտ նիւթերով իրենց թերթը լեցուցին. և երբէք բարեյօժար դիտաւորութիւն չ'ունեցան թերթին ուղեգիծը գէպի լաւն յեղաշրջելու :

Այսպէս թէ այնպէս վերջապէս հրատարակութիւններ էին. բայց և այնպէս ասոնցմէ շատերուն կեանքը իրիտ կարճատե եղան. այս թերթերը երբէք տեսականութիւն չ'ունեցան. վամուկ ոչ թէ՛ նիւթական ու բարոյական քաջալերութիւն չ'գրանցեցին համար ստիպուեցան իրենց հրատարակութիւնները գաղթեցնել, այլ և՛ որովհետեւ ասոնց վարիչները իրենց կոչման չ'համապատասխանող խել մը առաւ փախաւի և բաղդախնդիր մարդիկներ էին. և ջանացին ժողովրդին բարեմտութիւնը շահագործել : Հրապարակագրի մը պարտականութիւններուն գրեթէ բոլորովին անգիտակից, ուղեցին ազատ երկնքի տակ կատակերգութեան դերեր խաղալ :

Եգիպտոսի մէջ ալ ունեցանք պարբերաբար հրատարակուած թերթեր, որոնք իրիտ կարճ կեանք մը ունենալէ յետոյ « անշարժ եղեցի » ի չար ճառօսին արժանացան :

Արդարեւ մինչև ցայսօր ցաւ կ'զգանք և կ'ողբանք « Փարոս » ի վրայ, երբ մերթ ընդ մերթ կը թղթատենք անոր թերթիկները, որոնց մէջ ստուար քանակութեամբ կը պարունակէր այնքան գողտրիկ գրութիւններ, որ հանրութիւնը կը շահագործէր և որ ակնախտիչ հրապարակներ կը ներշնչէր ամեն անոնց, որոնց որ ձեռքին մէջ կը գտնուէր այն :

Չգտնուեցաւ մէկը որ իւր խորին համակրանքը չ'յայտնէր այդ լաւ ինամուտած հրատարակութեան « Փարոս » ին բոցավառ լոյսը մարեցաւ. ինչո՞ւ, սակայն ինչ

Ն Ա Մ Ա Կ Կ • Պ Ո Լ Ս Է Ն

(Արշարյանի մասնաւոր թղթակցէն)

Կ. Պոլիս 21) 4 Յուլիս 1901

« Յ' տեսութիւն » ս թիչ մը երկար տեսեց, ամբողջ ամիս ու կէս գրեթէ, ու հիմա նորէն նոյն վտիտ պաշարովն է որ գրելը ձեռքս կ'առնեմ :

Տարօրինակ, յաջորդաբար ստեղծելի տաք ու մեղու աստիճան ցուրտ օդը որ հոս կը տիրէ, Պոլսեցիներն անտուր թուրութեան մը ենթարկած է. աս ալ չէր օգտեր ու ժանտախտի վախը եկաւ բոլորովին սարսափեց ուց սրտերը. անցած տարի Աղեքսանդրեայ էր, բաւական հեռու. յետոյ Իզմիր եկաւ, անկէ Տրապիզոն, այդ անախտով եւ ինքնակոչ հիւրը, ու օրին ալ լուրը հանեցին թէ՛ Խաղաղ եւ Բերա մէջմէկ հրէայն ժանտախտէ կն բռնուէր. (չ'եմ գիտեր սակայն ինձի անանկ կը թուի թէ՛ ժանտախտը հրէաներու համար բռնեցի՞նք մը որ ունի) անցած օր ալ մեր լաւագոյն գրացին, Պուլիարիան, տասըմէկ օրուան քարանձիւնա մը հաստատեց Պոլսէն գացող նաւերու. բարեբախտաբար այդ լուրերուն սուտ ըլլալը հասկցուելով, մէկ օրէն վերջացաւ :

Օրերը կը գլորին, Ուսումնական խորհուրդը իբրբանցումի մէջ է. այսօրն ըզմնաւոր շրջան մը անցուցած չէր ընաւ. նախ՝ կայ չըջանաւարտից քննիչ յանձնաժողովը. երեք ուսուցչական ընտրելիներու քննիչ յանձնաժողովը ետքը ու մանաւանդ ամենէն կարեւորը կիրակնօրեայ քառասունութ իւրեաները որոնք իբրեւզ վերջին կը մտնեն. ա՛ն. այս գտները. Բերա ըլլալը կ'արժէ շարժել Յ ժամ, կիրակի օրերը Ձ էն 5, ներկայ գտնուելու համար ամենէն տարօրինակ տեսարանին :

Ներեցէք որ քիչ մը երկար խօսիմ այդ մասին. ինչորը կարեւոր է, այդ դասերը մեր ինչ աստիճան խեղճ ու առաջ երթալու ալ անկարող ժողովուրդ մը ըլլալը կ'ապացուցանեն. Ուսումնական խորհուրդ. Պատրիարք. ուսուցիչ, ամենը իբր անցան բան մը ընկելու համար ու ծնան մուկն չնչին. Բերայի Արհեստանոցին ամենէն պզտիկ սրահին մէջ երեւակայեցէք որ այս տարեւուն 200 հոգի մը խոնուին (գոնէ սկիզբներէ, որովհետեւ հիմա մեծ մասը հասկնալով ինչ դուռն բան ըլլալը խօսուելիքներուն, ալ չեն երեւնար իսկ, սրահը կէս մը պարսպ ձգելով), ու անչին Մալաթիան մը կ'ըլլայ չգիտցած բաներուն վրայ ճառէ, բացատրել ջանալով թէ ուղիղ նստողներուն աչքը աղէկ կը տեսնէ ու ծուռ նստողներունը գէշ. սխալելով, նորէն սկսելով, նորէն շուտրելով. կամ Պէրպլեան մը կ'ըլլայ հոգեբանութիւն խօսի (այդ հին փոտած փիլիսոփայութիւնը) ամբողջ երկու ժամ, մինչդեռ անչին ունկնդիրները կը քնանան կամ աղբիկները նոթի տետրակներուն վրայ... էջու գլուխներ կը գծեն : ինչ է օգուտը ատոնց, ոչ որ հասկցաւ... բացի Գուրգէն էջ. էն անշուշտ որ հայերէն լեզուն սովորեցնելու միջոցներուն վրայ խօսելու համար իբրն տրուած բանախօսութիւնը կ'ըլլաւ գործածեց ամբողջ ժամ մը մեղի բացատրելու թէ Ուսումնական խորհուրդը իրաւունք ունի տարեկան 10000 ոսկի գալորեցական ծախսի փոխարէն մինակ 4 տղայ հասցնելու... քանի որ Իւսկիւտարի Հոմ-Սքուլը այս տարի մինակ մէկ Պուլիար շրջանաւարտուէի էր հանած :

Ու անտեսելու է իր միմիքը, բեմին վրայ օմապը տնկած, սաստիկու ձեւով մը երեքցնեցով զայն, մինչ կը փրփրար բզլոր այն յանդուգն մահկանացուներուն դէմ որոնք Ուս. խորհուրդին ու եւ կ'երպով մը չէին հանած :

Միակ օգուտը ատոնց սպանովարար տարիք տուած ըլլալն է պոլսոյ չորս ծայրերու դաստաններուն իրար ճանչնալու ու իրարու ինչ սպարանք ըլլալը հասկնալու :

Ասկէ ուրիշ չեմ գիտեր ինչ յուսաց Ու-

չու տեսականութիւն չունեցաւ. Պիտի ներքին մեղի անշուշտ, անոր Խմբագիր-Տնօրէնը կ'իջեր բրբէք յանդգնինք ըսելու թէ՛ բարի կամեցողութեան և ի մասնաւոր յարատեւութեան ոգին պակսեցաւ. չ'ունեցաւ այն բացառիկ ճկունութիւնը և կորովամտութիւնը, որպէսզի կարողանար մի քանի տարիներ տոկալ :

Գալով « Փիւնիկ » ի շիտակը ժամանակին ճիշտ գուշակութիւն մը ընելու փառքին չէինք ուզեր հասնիլ, քանի որ անոր Խմբագիրը շատ մօտէն ճանչնալու պատիւը ունեցած էինք... Թերեւս ճակատաբային ըմբռնում մը եղած ըլլայ սա. անոր ալ այսպիսի, ուրիշ ըսելիք չ'ունինք... :

« Արշարյան » ի մասին առ այժմ չենք կարող որոշ բան մը բռնել, քանի որ տարեշրջանը նոր լրացուց. մի կիսի սա համուզումը ունինք թէ՛ այդ թերթը միշտ իւր գոյութիւնը պիտի պահէ, որքան ատեն որ անոր Հիմնագիր-Տնօրէնը կայ ու կը մնայ :

Մեր մարգարէութիւնը (կ'իջէ այդպէս պէտք է ըսել) սա տրամաբանութեան վրայ կը հիմնենք թէ՛ « Արշարյան » ի հրատարակութեան օրէն ի վեր հակառակութիւններ, օսնձգութիւններ, գրեթէ միշտ անպակաս եղած են թերթը խափանելու համար. շատերու անախտով թուեցաւ անոր հրատարակութիւնը, և այնատեցան բարոյապէս մեռցնել ուղեղէ վատ, անոր նիւթականին ալ վնասել, գրեթէ երեսուէն ամիս մը յետոյ ստուար քանակութեամբ թերթեր մերժել տալով, սակայն այս ստորնութիւնները ու է արդիւնք չ'ունեցան թերթին յարատեւութեան դէմ :

« Արշարյան » որքան որ երբեմն լախնամեալ դուրս չ'եկաւ և խել մը դժուարահաններու գրականապէս լիւրի գոհացում չի տուաւ, այսուհանդերձ միշտ ջանաց ժողովրդին արդար պահանջներուն կարեւոր եղածին չափ դոհացում տալ, և տարակոյս չ'կայ ըսելու թէ՛ անոր Տնօրէնին ցոյց տրուած եռանդն ու կորովամտութիւնը միջոց մը եղաւ, ժողովրդին թերթերու մասին ունեցած խախուտ հաւատքը վերահաստատուելու :

Յամենայն դէպս մենք մաղթող ենք որ թէ՛ արտասահմանի և թէ՛ մայր երկրի մէջ հրատարակուող ամեն թերթերը, որոնք ժողովրդի բարոյացման, կրթութեան և գաստիարակութեան գործին կը սատարին, իրենց գոյութիւնը վառ պահեն՝ մինչև որ նորեր հասնին այդ նուիրական հոգը ստեղծանելու : Միևնոյն ատեն պէտք է ի բոլոր սրտէ նուիրենք մեր աշակցութիւնը հանրային այն ձեռնակին՝ որն որ մեր աղբիւր բարոյական և նիւթական մակարդակը բարձրացնելու պիտի ծառայէ :

Ձի վճատինք երբէք գործելէ. պէտք է գիտնանք թէ՛ գործ մը առանց յարատեւութիւն ունենալու արդիւնքը զրօ մէ :

Հուսկ ուրեմն՝ մեր ձեռնարկներուն կործանման և քայքայման առաջին կարող ենք առնուլ՝ տեսականութեան մէջ պահելով զանոնք :

ստեղծական խորհուրդն ալ, սակայն սպանովարար յուսացուածը չէր որ կ'ըլլաւ :

Միակ երկու անձերը որոնց խօսուածքը առանց խոշոր ձանձրոյթի մտիկ կ'ըլլուի, Հինդլեան ու Սուրէնեան էֆէնտիներն են, առաջինը իր մանկավարժութեան պատմութիւնովը ու երկրորդը աշխարհագրութիւն ու պատմութիւն սովորեցնելու իր մեթոտովը որ բաւական նոր բաներ կը պարունակէ եւ որ մասնաւոր շատ սիրուն ձեւով մը ըսուած ըլլալով ունկնդիրները միշտ կը պահէ զոգարթ հետաքրքրութեան մը մէջ :

Երեսուցեան էջ. իր հաղիւ լսելի ձայնով խօսքուածքին մէջ իսկ, գիտացնին զգալութիւնը կ'ուստայ, հակայ հմտութիւն մը ունեցող մարդու մը դէմ գանուած ըլլալու, ու ատիկա իսկ կը բաւէ իր գասը շահեկան դարձնելու համար, հոս ալ աղբիկներն են որ կը քննանան՝ երբ չափական գիտութիւններու վրայ խօսած ատենը, անիկա գիտական ամենատարրական բաներ կ'արտասանէ ու չ'են հասկնար :

Ամբողջութեանը մէջ սակայն վիժած գործ մը. բոլորովին անպատ. եւ նոյն իսկ թերեւս արդիւր աւելի լուրջ ձեռնարկութեան մը քանի որ քիչով գոհ ըլլալու այդ սպեղ բնարանը շատոնց է որ ունինք :

Պոլսոյ մեր լրագրութեան վրայ նոր հանդէս մ'ալ աւելցաւ (վստահ չ'եմ թէ հանդէս է թէ գիրք, սակայն ամեն ամիս հրատարակելու խոստումէն կը հետեւցնեմ թէ՛ հանդէս պէտք է ըլլայ, թէ՛ կոնակը Մէարիֆի արտօնագիրը կայ) : Հասկցաք անշուշտ թէ՛ կ. Պոլսոյ Ազգ. Վարժարանաց կրթական Տեսուչ Յովնան էջ. Գ. Փալագաչեան ի. նիւթ՝ բանասիրական ուսումնական, մանկավարժականին՝ վրայ կը խօսիմ : 80 երեսնոց դեղին սետրակ ջ'էր ատիկայ հատը հինգ դրը... :

Տասը տարիէ ի վեր մեր մէջ թերեւս այդքան գերազանցօրէն խեղճ հրատարակութիւն չ'էր եղած, ու արդէն շատ ալ սպասելու իրաւունք չ'ունենինք մարդէ մը որ իր բովանդակ զարնուրելի աղետութիւնովն եւ միջակութիւնովը մէկտեղ կըցած է կրթական Տեսուչը ըլլալ Պոլսոյ 40 Ազգային վարժարաններու՝ շնորհիւ շատ միջակ ուսումնական խորհրդի մը :

Առաջին յօդուածը երկարօրէն կը բացատրէ, հոգ չէ թէ քիչ մը տարօրինակ սխալներով, թէ՛ 1900 Յուլիար 1 ին արդէն 20 ըզգարըմտած ենք. մենք կը կարծէինք թէ՛ երեք ամիսէ ի վեր ատոր բոլորովին հակառակն ալ կ'ստեղծի տակ չ'էր :

Յետոյ Փիլիմոն մը գովելի նախանձախնդրութեամբ մը կը ջանայ մեր եկեղեցական ծէսերն ու արարողութիւնները իրենց նախկին վիճակին բերել. յետոյ, ինչ որ հրաշալիէ ու թերթին գլուխն կը կազմէ. նախապատմական վարքէ է, անշուշտ Փալագաչեան էջ. ի. ու անկէ ետքը խելօք կ'արապետին կենսագրութիւնը (կատակ չի կարծէք) ու ալ չ'եմ գիտեր ինչէր :

Բարեբաղդարար հոս իսկ Պոլիս. մամուլին մէջ ձայն բարձրացուցին այն վստահին առջեւ որ ուսումնական խորհուրդը կ'իյնայ իր ընտրած կրթական տեսչին պարսպ մէջ հրատարակութիւնովը, ու Արեւելքի մէջ Արամ Անտօնեան իր սովորական ոճովը մատնանիշ ըրաւ սպուշութիւնները այդ հրատարակութեան. տեսներք յաջորդ թիւը :

Իսկ կարեւոր խնդրի մասին՝ Պատրիարք ու Պատրիարքարան՝ չ'եմ գիտեր ինչ գրեմ. Պատրիարքը նորէն ետ առաւ հրատարականք թէ՛ կ'ազդով ու... առժամաբար. այդ առժամաբարը կարծեմ մինչև յաւիտեան պիտի տեւէ, հիմակու հիմա դեռ չէ սկսած Վստիտի գիւղերուն մէջ իւր քոռննէն հարուստներուն տունը. սակայն յապահովարար շատ չ'ունաստար. այս տարի չէ որ մարդուկը հին բարի սովորութիւն մը պիտի փոխէ. մանաւանդ որ քիչ մ'ալ սկար է եղեր... մէկ երկու օրէն անշուշտ նորէն կը ըսենք թէ՛ Պատրիարքը այս ինչ

Չորսն տունը գտնուած ատենը . փողոցին մէջ գտնուող է խաղցնել տունը ու ինքըն ալ քեռնաս էն չէ ամչցեր դիտելու . ի մեծ զարմացումն քովի յոյն ու օտարազգի գրացիներուն . չի կարծէք թէ՛ տարօրինակ պատմութիւն մը ընելու տենչէն եմ բռնուած . անցեալ տարի պատահած է դէպքը . մեծ կզզի . Կ . . . էֆ . ի տունը ուր հիւր պացած էր . ու կզզի բոլոր հայ բնակիչները գայթակղած էին այդ տարօրինակ տեսարանէն . սը գիւրնը պարզապէս ամօթով էր ձգած օտարներուն քով :

Օրմանեան Պատրիարք սակայն հոգը չ'ընէր ատոնք , իրեն ինչ ժողովրդեան կարծիքը ինք իր ճամբան կը քալէ հանդարտ ու անխոզ . ականջնկը թիսած ու ձեռքերը գրպանին , աննոց յարածուն ունեցողը իր հոգիին վշտերը մոռնալու համար :

Ֆ . ԹՈՒՆԻԿ :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՏԻՎԸ . — Կ . պոլսոյ թերթերը կը ծանուցանեն թէ՛ Մանրուսալը օգոստոս 15 ին Տարտանեղէն Թրիէսի միտի երթալն . Բ . Խոփիլը առնելու և պոլիս տանելու համար :

— Հոռովէն Թրիպոլիս լրագրող իւր 20 թուոյն մէջ ժընէվէն հետեւեալ հեռագիրը ընդունած է .

Ն . Բ . Խոփիլին հետեւորդներուն պատկանող եգիպտացի պաշտօնատար մը՝ որ Նիօնի մօտ կը գտնուէր , լծին մէջ խեղդուեցաւ , դեռ յայտնի չէ թէ՛ դիպումը մէ թէ՛ ոչ անձնասպանութիւն :

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԴԵՍՊՈՒՆԸ . — Ֆրանսական դեսպան Պ . Գօգորտանի կինը կատարեալապէս առողջացած է և աղջկան առողջութիւնը շատ բարւոքուած է : Պ . Գօգորտան և ընտանիքը մօտերս Բարիզէն պիտի մեկնին ծովու բազմիքները երթալու համար :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԱՍՈՒՆ ԵՒ ՁԷՅԹՈՒՆ

Երեւոնի Տիար Ս . Ֆէլէկեանի վերոյիշեալ հեղինակութեան առաջին ֆօրման հրատարակ ելած է :

Բաժանորդագրուելու փափաքողք , ինչպէս արդէն ծանուցուած է , կրնան դիմել « Արշալոյս » ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ . ուր հեղինակը կը գտնուի կէս օրէ վերջ ժամը 5-7 :

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Սէուլ 24 Յուլիս . — Բորէա կը շարունակէ դէպի սահմանադրութիւն զինուորները զրկել Չինացոց ասպատակութեանց դիմագրելու համար . արդէն բաղխում մը տեղի ունեցաւ :

Եազօհամա 24 Յուլիս . — Չինու կայսեր այժմեան դժուարին կացութեան վրայ ճարտարական մամուլը կը կարեկցի , բայց դաշնակցութեան մը գաղափարը զայրոյթով կը մերժէ :

Լոնտրա 24 Յուլիս . — Անգղիական կառավարութիւնը Թրանսվալի պատերազմական ծախուց համար 11,500,000 անգլ . ոսկոյ վարկ մը պիտի խնդրէ երեսփոխանական ժողովէն :

Երեսփոխանական ժողովը երկրորդ ընթերցմամբ ընդունեց 13 տարի ծառայու-

թիւն ունեցող նաւատիրներէ բաղկացեալ 15,000 հոգւոյ պահեստի նաւային բանակի մը առաջարկութիւնը :

Բարիզ 26 Յուլիս . — Տէրութիւնները կը շարունակեն Չինաստանի մասին կարծիքներ փոխանակել : Բէքինի վրայ յառաջիկա զացութիւնը պիտի սկսին օգոստոս 1 ին :

Լոնտրա 26 Յուլիս . — Ամսոյս 18 ին տեղական աղբիւրէ յառնուած լուրերուն նախելով Բէքինի մէջ դեսպանները ողջ էին : Չինուկ — Լի-Յամէնը կայսեր խնդրագիր մը ներկայացուցեր է օտար դեսպանները զինուորներու պաշտպանութեան տակ թղթնալիս Չին զրկելու համար : Կայսերական զինուորներուն և օտարականներուն մէջ տեղի ունեցած պատերազմները դադրած էին :

Լոնտրա 26 Յուլիս . — Երեսփոխանական ժողովոյ մէջ Լորտ Համիլթըն Հնդկաստանի պիւտեճէին վրայ խօսելով ըսաւ թէ՛ սովէն յառաջ եկած ծախքերը համեմատութեան դրած էին : Ասոր համար է որ որոշուած էր 3,000,000 Անգլ . ոսկոյ թուղթեր չըջարեութեան հանել : Եթէ այդ մինչ հոկա . չի բաւէր , Հնդկաստան վստահութեամբ կրնայ դիմում ընել կայսրութեան նոր պիւտեճէին :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԿԻԱ

ՎՈՍՓՈՐԻ ԱՆՅՔԸ . — Կ . Պոլսէն կը հեռագրեն Կագէթ սը Շրանկօրի .

Ռուսիոյ դեսպանը յայտարարեց Բ . դրան որ՝ եթէ Ռուսական պատերազմական նաւերը Վոսփորէն անցնելու արտօնութիւնը ստանան , Ռուսական կառավարութիւնը նեղուցներուն չէզոքութիւնը չը պիտի յարգէ , հետեւաբար Թուրքիան պէտք է Ռուսական նաւերը պոլսոյ մէջ ընդունելէ հրաժարի :

Թայիլ իւր պոլսոյ թղթակցէն կ'իմանայ թէ՛ պոլսոյ Ռուսական դեսպանը բերանացի կերպով բողոքած է ներքին գործոց նախարարին մաշիւնար և սերվէք առնու լրագիրներուն այն յօդուածներուն դէմ , որոնք կը քաջակերեն Չինաստանի մէջ հակաքրիստոնէական շարժումի պետերը :

— Բ . դուռը բնաւ կարեւորութիւն չի տար Էնիզ փաշայի Հայէպի Վալի անուանման դէմ դեսպաններու կողմէ եղած դիտողութիւններուն :

ՖՐԱՆՍԱ

— Ֆրանսական Հանրապետութեան նախագահ Պ . Լուպէ Շէնպուռի մէջ աչքէ անցուց Միջերկրականի և Մանչի միացեալ նաւատորմի գնորդ . խանդավառ ընդունելութիւն մը եղաւ իրեն :

— Փէքինի կաթոլիկ եպիսկոպոս Մօնս . Մալիէի Մայիս 10 թուականու ընդունած նամակէ մը կ'իմացուի թէ՛ Պոքսըրներու շարժումը արդէն այդ թուականէն սկսած էր :

ՉԻՆԱՍՏԱՆ

Ճարտարական աղբիւրէ կ'իմացուի թէ՛ մինչև Յուլիս 6 օտար դեսպանները ողջ և առողջ էին Փէքինի մէջ :

— Չինական զինուորները որոշած էին ամսոյս 7 ին ուղարկուել դեսպանատունները . օտար դեսպանները կայսրը և Մայր Կայսրուհին շատ դժուար կացութեան մը մէջ գտնուին :

— Շանհայէն Յուլիս 16 թուականու հեռագիր մը կ'ըսէ թէ՛ Չինական անպատճառ ճշգրիտ տեղեկութիւններ ունի արդի դէպքերուն վրայ զորս սակայն կը պահէ . Փէքինէն շատերու մասին եւրոպա զրկուած հեռագիրները կրնան շատ ճշմարիտ նկատուիլ :

— Յուլիս 14 ին Թրիէն-Չինի ճակատամարտին մէջ եւրոպական միացեալ ուժերէն 775 մարդիկ սպաննուած են :

Չինաստանի ներկայ բացառիկ գիրքին հանդէպ չահեկան է դիտուալ Հնդկաչինու մէջ Ֆրանսայի տրամադրած ուժերը :

Հնդկաչինու մէջ Ֆրանսան ունի երեք ծովային հետեւակազորի գունդ . 14 մարտկոցներով ծովային հրետանիի գունդ մը : Օտար լէգէօնէն երեք վաշա՝ չորս Թօնքինցի հրացանահիգներու գունդ և ուրիշ գունդ մը : Ասկէ զատ ամբողջ ծայրագոյն Արևելքի կայսրութեան մէջ կրնայ տան հազար տեղացի զօրք հանել :

Վերջապէս , քանի մը ամիսներէ ի վեր Հնդկաչինը այնքան ռազմավթերք ընդունած է որ կրնայ առանց վախի ամեն պատահականութեանց դիմադրել :

ԹՐԱՆՍՎԱՆ

Մինչև 18 Յուլիս . Անգլիական բանակին Թրանսվալի մէջ ունեցած կորուստը 44,315 հոգի ի կը համի :

ԼՕՐՏ ՌՈՊԷՐՉՄԻ ԱՌՈՂՁՈՒԹԻՒՆԸ . — Պաշտօնական հեռագիրներուն լակոնական ոճին վրայ հանրային կարծիքը մեշտ գրգուռած է , լորտ Ռօպըրթսի հիւանդութեան վրայ մինչև ց'արդ որոշ լուր մը չըկայ , ոմանք կը կարծեն թէ՛ զօրավարը իր հիւանդութեան պատճառաւ զգալի կերպով տկարացած է , այլք կը կարծեն թէ՛ միշտ քաջառողջ է : Կ'ըսեն թէ՛ սասն օր շարունակաբար իւր հեռագիրները անկողնոյն մէջ խմբագրած է ինչ որ ապահով է այն թէ՛ Ափրիկէէն կարելի չէ նոյն իսկ Անգղիական գունդ մը հանել :

Աֆրիկանորը պատգամաւորները Լօնտրայի մէջ , Կագէթ սը Ռէսքրիկնսքր , այժմ Լօնտրա գտնուող Աֆրիկանոր պատգամաւորներուն պաշտօններուն և ընտանիքներուն վրայ մանրամասնութիւններ կուտայ :

Տր վօս պատգամաւորութեան նախագահը Հոլանտական հին ընտանիքի մը կը պատկանի : Բարեյուսոյ գլխուն Վիգթօրիա գալորցին ժողովոյ անգամ է և Սթէյլէնպօրի մէջ Աստուածաբանութեան Բրօֆէօսէօր . իւր ուսումը Էտիմպուրկ առած է :

Պ . Ռօմօլֆ Պօթա , Թրանսվալցի Պօթ զօրավարին ազգականն է , և ֆրանսական ծնունդ ունի , երկրագործութեամբ կ'ըբազի , և հաշտարար գատուորի պաշտօնը կը վարէ :

Պ . Ֆիլիպիփիւս Տիւ Փլէսսիս , որ 1668 ին Բարեյուսոյ գլխուն մէջ հաստատուեցաւ ֆրանսացի կոմս Փլէսսիսին ուղղակի սերունդէն է , շատ անգամներ առեւտրականութեան մէջ պաշտօններ ունեցած է :

Տը Վէթ , ընդհանուր ժողովոյ բարտուղար :

Հայր Ատրիան Մուրիս որ պատգամաւորութեան կ'ընկերանայ , Բարեյուսոյ գաղթականութեան մէջ բարենորոգեալ եկեղեցւոյն Սինթիս ֆոն-Նախագահն է :

ՀԱՊԵՆՍԱՆ

Կ'բարե թէ Յունաստանի Եօրկիոս թա-
գաւորը Մենելիքի նամակ մը դրած է սրով
կը խնդրէ որ Եթովպիոյ մէջ բնակող Յոյ-
ները այսուհետեւ Անգլիական պաշտպանու-

ՄԱՐՈՔ

— Հրեայ վաճառական Մարթոս Էս-
սակիմի սպաննութեան համար Մաւրիտոս-
նացիներու մէջ գրգռուելը աւելնալու վրայ
է ։ Հրեայները իրենց թաղերուն մէջ փակ-
ուած, չ'են համարձակիր ոչ գուրս ելնել և
ոչ ալ իրենց գործերովը զբաղիլ ։ Քաղա-

Միացեալ նահանգներու կառավարու-
թիւնը Քանճէրի լիազօր գեներալին հետա-
գրեց, որպէսզի ազգու միջոցներ ձեռք
առնէ միւս Եւրոպական տէրութեանց ներ-
կայացուցիչներուն հետ, կատարեալ գոհա-

Քննութեան մը կը հետեւի թէ՛ որքան
անարգարանալի է Մարթեան ստիկանու-
թեան վարմունքը այս հրեայ վաճառակա-
նին սպանման առթիւ ։

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԲԱԹ 27 ՅՈՒԼԻՍ 1900

Table with 6 columns of numbers: 7568, 8333, 1703, 3495, 5360, 6624; 2297, 9854, 7683, 2649, 953, 7266; 9475, 8401, 7453, 7140, 2878, 6413; 9311, 687, 1133, 6582, 9819, 3969; 8910, 6171, 1436

ՀԱՒԱՔԱԾՈՅ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ. ԵՂԻԱՋԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՁ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտ-
ներու օձակացութեամբ եռաձայն և քառա-
ձայն պատրաստուած սոյն հաւաքածոյէն
գնել փափաքողներն կամ բաժանորդագր-
ուիլ ուզողներն, կրնան գիմել՝ Արշալոյսի
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնագիր-Տնօ-
րէնին ։

Տիար Մ. Հայկունի Բարիզ ուղեւորե-
լուն պատճառաւ, իւր հրատարակած «Վա-
րագոյր Մարգիպին Կենաց» գրքին սա-
կաւթիւ օրինակներն յանձնած է Արշա-
լոյսի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ ։ Գնել փա-
փաքողը կրնան հոն գիմել ։
Բանի մը օրինակ մէկ անգամէն գնու-
ղին 20 առ հարիւր զեղլ կը լինի ։

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՆՈՐԱԿԱԶՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

«ԱՐՇԱԼՈՅՍԻ»

Հիմնադր. 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻԶԸ

Օսնակիչի դեղատանիկի դիւնացի փողոցին մէջ.

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առա-
ւօտեան ժամը 7էն մինչև երեկոյեան ժամը 8 ։
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր
և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ,
կ'ընդունուին.

Այցեխարտեր, Շրջաբերականներ, Գիտիւթ,
Հրախաւարներ, Մանազրներ, Տեղեկագիրներ,
Կանոնագիրներ, Տոմար և այլ և այլ վաճա-
ռականական յանձնարարութիւններ ։

Ամենակատարեալ ճշգրտագնութիւն և
չափաւոր գին ։

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻԿ ԵՆ.

ԿՈՊԷՌ ՊԵՆԼԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐ.

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱՏՈՒՆ ԵՒ ՆՊԱՐՁԱՏՈՒՆ

Տասներկու տարիներ շարունակ կարեւոր
լուսանկարչատուններու մէջ աշխատելով,
արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած եւ
փորձառութիւն ստացած է ։

Պոլսոյ մէջ Ապտուլլահ եղբարց տան,
ինչպէս եւ ուրիշ մի քանի ծանօթ տուններու,
քաղաքիս մէջ վերջին անգամ Լէքէճեան
գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը
վարած, այժմ առանձին գործատեղի մը
կը հիմնէ Էօզպէֆիյէ Շարխա Գաւնէջ ՕՒԷԼ
ՇԷՔԷՐՏՍԻ ճիշտ գիմաց թիւ 3 արարթումներն
երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսա-
նկարներ, ինչպէս եւ գուրսը կուտփներ
ի հարկին ։

Ակրակալան բնական մեծութեամբ ։

Կենդանագիրներամերիկեան մեքենայով
որոնք երբէք չ'են աւրուիր ։

Գունաւոր լուսանկարներ ամեն մե-
ծութեամբ բնական գոյներով միլիտարիս ։

Իւզաների եւ ջրաների պատկերներ ելն ։

Լուսանկարի եւ պատկերահանութեան
վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ըն-
դունի ոչքողչ, ճեմէրոյրնաւ ելն ։

Իրեն գիմող յաճախորդներն հանել սուած
լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր
մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ ։

Տ Հ Ի Մ Ի Զ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Ց

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԽԱՌՐԵԱԼ ԳՐԱՍԱԳՐՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամե-
նէն աւելի շահաբաժինները ։

Ապահովագրեալներուն արդէն վճարած
է կամ ինպատար իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ
480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ օր
և է ընդունութեան մէկ միլիար աւելի է ։

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ
Իրահիրէ

ՏՕՔԹ. Ա. Յ. ՔԵՐԵՍՍՈՒԹԵԱՆ

Ի Շարխա Գոյր-Պէյ, թիւ 20

Իր ՉԻԻ խորհրդակցութիւնները սակից
վերջը, միայն ուրբաթ օրերը կես օրէ առաջ
ժամը (ը. ե.) 9էն 11 որչաժ ըլլալով կը
խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտու-
թիւն իրեն գիմել ուզող ազքատ հիւանդ-
ներու ։

Գ Ա Ֆ Է Ս Օ Ք Ա

Տիգրան Կոտանեան պատիւ ունի ծանուցա-
նել Արգոյ հասարակութեան թէ՛ վերջերս
սկսած է իւր Փազար-Մրուրի խանութին մէջ
պատրաստել Եհմէնի սառն ին ամենաբնաւոր
և անխարդախ տեսակէն իրեն գիմող յաճա-
խորդներ օխան 16 զըշ ողջի հաշուով, զուտ
խաբէ պիտի կրնան գնել. կչուոյ մէջ ալ ուղ-
ղամուտիւն գտնելով ։

ԳՔԲԵ ՈՒԶՈՂՆԵՐՈՒՆ

Գահիրէի և շրջակայից գրասէր Հայ հա-
սարակութեան գիւրուտիւն մը տալու մտօք՝
կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք,
(Իստական, Իպրոցական, Գիտական, Գրական
Արուեստական, Բանասիրական, Վիպական
եւ այլ) որ հրատարակուած են և կը հրա-
տարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆ-
լիզ, Վենետիկ ու Վիէննա, կարելի է գիւրա-
մատչելի պայմաններով ձեռք բերել՝ գի-
մելով Տիար Կ. Նաւասարդեանի, Գալստեան
վարժարան Հայոց Ի Գահիրէ ։

ՏՕՔԹ. ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Ապսիւն Շարա Գուրբի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հա-
սակի յարմար ընտիր սպրանքներով կեղծ
ակուաներ ։

Կը դադարեցնէ վայրկեանապէս սկոտլի
ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթօտով իւր
պատրաստած գեղերով ։

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տե-
սակ հիւանդութիւններն ։

Իր լեցուցած ակուաներուն տոկոնու-
թիւնն առ նուազն երկու տարուան համար
կ'երաշխաւորէ ։

Վկայեալ ազքատներու ճրի դարմանում,
ամեն օր կէսօրէ ետք ժամը 3—5 ։

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործա-
կատար յ'Աղեքսանդրիա ։